ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Սարչապետ համայնքի ավագանու <u>հերթական</u> նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Սարչապետ	Ավագանու հերթական նիստ	12.10.2021թ.	14:30	Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք, ավագանու նստավայր (ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, փ.1, շենք 67)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. Հոկտեմբերի 12-ին՝ ժամը 14:30-ին Սարչապետի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

գ.Սարչապետ **07.10.2021թ.**

1. Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 12-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին: (Զեկ. Բ.Բարոյան)
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
3. Սարչապետ համայնքի 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդման մասին: (Զեկ. Ս. Բարսեղյան)
4. ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

"___" _____ 2021 թվականի N ____ - Ն

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 08 հերթական նիստի հետևյալ օրակարգը ՝

1) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

2) Սարչապետ համայնքի 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդման մասին: (Զեկ.Ս.Բարսեղյան)

3) ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

"___" _____ 2021 թվականի N ____ - Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կամավոր խնդիրները դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Նախագիծ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու

2021 թվականի _____-ի N _____ -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Սուքիասյան Հասմիկ Սերոժի (բնակավայր Նորաշեն) -(հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
2. Նավթալյան Ռուզաննա Բուդախի (բնակավայր Նորաշեն) -(հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
3. Խաչատրյան Սիրուն Մուգուչի (բնակավայր Նորաշեն) -(հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
4. Դալլաքյան Աննա Վաղինակի (բնակավայր Պրիվոլնոյե) -(հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
5. Առաքելյան Անի Լեոնիկի (բնակավայր Ապավեն) -(հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն):

(հազար) ՀՀ դրամ

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

_____ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

"___" _____ 2021 թվականի N ____ - Ն

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սարչապետ համայնքի 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

"___" _____ 2021 թվականի N ____ - Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով՝

Սարչապետ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու
2021 թվականի _____ ____-ի
թիվ _____ -Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման և չափի հաստատման

1. Սույն կարգով սահմանվում է Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:
2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ասվա մեկից:
3. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել տոկոսային ավելացում՝ 5%-ի չափով:
4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**